

Արթուր Ղամբարյան

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ*

Պետիկ Մկրտչյան

*ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի տեղակալ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս,
Արդարադատության ակադեմիայի դասընթացավար*

**ՍՏՈՒԳՈՒՄ (ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄ) ՆՇԱՆԱԿԵԼԸ
ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՑՈՒՅՈՂԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ¹**

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում ստուգում նշանակելու ինստիտուտի էությունը, դրա զարգացման պատմությունը, ինչպես նաև ստուգման ակտի ապացուցողական նշանակությունը:

Վերլուծվում է ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ ստուգման արդյունքները կարող են որպես ապացույց ճանաչվել «միայն այն դեպքում, երբ առանց դրանց վարույթի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզումն օբյեկտիվորեն անհնար է»:

Հեղինակների կողմից բացահայտվում են այդ անհնարինությունը ենթադրող իրավիճակները, և ըստ այդմ ներկայացվում է, թե քրեական վարույթում երբ է հնարավոր ստուգման արդյունքները ճանաչել որպես արտավարությային փաստաթուղթ:

Հոդվածում անդրադարձ է կատարվում քննիչի որոշման բողոքարկման քրե-

¹ Հոդվածը ներկայացվել է 28.08.2023 թ., գրախոսվել է 13.11.2023 թ.:

ադատավարական կառուցակարգին, հսկող դատախազի կողմից ստուգում նշանակելու մասին քննիչի որոշումը վերացնելու դատավարական հետևանքներին, ինչպես նաև ստուգման ակտը ՀՀ վարչական դատարանում բողոքարկելու միջոցառումներին հարցերին:

Քննարկվում է նաև այն հարցը, թե քրեադատավարական ինչ հետևանքների կարող է հանգեցնել ստուգման ակտի վարչական կամ վարչական դատավարության կարգով անվավեր ճանաչումը:

Կատարված վերլուծությունների արդյունքում հեղինակները եկել են այն եզրահանգման, որ ստուգման ակտի անվավեր ճանաչելը, որը չի առնչվում մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտումներին, քրեական վարույթում հիմք չէ այդ ակտը և դրա հիման վրա ստացված այլ տվյալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հիմքով անթույլատրելի ապացույց ճանաչելու համար: Սակայն ստուգման ակտը՝ որպես արտավարության փաստաթուղթ, կամ դրա հիման վրա ստացված այլ տվյալը կարող է անթույլատրելի ապացույց ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի այլ հիմքով:

Հիմնաբառեր- ստուգման ակտ, արտավարության փաստաթուղթ, քրեադատավարական տաքսացիա, վարչական ակտ, իրավունքի ճյուղերի ինքնավարություն:

1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ նոր. քր. դատ. օր.-ի 41-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ քննիչը որոշում է կայացնում օրենքով նախատեսված ստուգում կամ վերստուգում (այսուհետ՝ ստուգում) կատարելու մասին: Այս լիազորող նորմով սահմանված ստուգումները վերաբերում են միայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով և դրա հետ փոխկապակցված օրենքներով (օրինակ՝ ՀՀ հարկային օրենսգրքով) սահմանված ստուգումներին:

Քննիչի՝ ստուգումներ նշանակելու լիազորության էությունը և ստուգման արդյունքների ապացուցողական նշանակությունը հասկանալու համար պետք է այն վերլուծել պատմական զարգացման տեսանկյունից:

2. Ստուգում նշանակելու քննիչի լիազորության պատմությունը

2.1. Կարգավորումները 1998թ.-ից մինչև 2009թ.

ԱՊՀ մասնակից պետությունների Քրեական դատավարության մոդելային օրենսգրքի (17.02.1996թ.) 86-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է պահանջելու անցկացնել վերստուգում, գույքագրում, գերատեսչական փորձաքննություն, այլ ստուգողական գործողություններ:

1998թ. ՀՀ քր. դատ. օր.-ն ընդհանուր առմամբ հիմնված էր ԱՊՀ մոդելային քր. դատ. օր.-ի վրա, ինչով կարելի է նաև բացատրել այն հանգամանքը, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի սկզբնական խմբագրությամբ սահմանվեց դրույթ այն մասին, որ քննիչը լիազորված է պահանջել կատարելու վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ: Քննիչի այս լիազորությունը գործնականում առաջացրել է բազմաթիվ քրեադատավարական և միջնուղային հարցեր: Մասնավորապես՝ դատավարական օրենքով կարգավորված չէր քննիչի այս լիազորության իրականացման դատավարական ձևը, ինչպես նաև քննիչի հանձնարարությամբ կամ որոշմամբ վարչական մարմինների ստուգողական գործողությունների կատարման ռեժիմը: Հստակեցված չէր նաև ստուգման ակտերի դատավարական, մասնավորապես՝ սպացուցողական նշանակությունը, ստուգման ակտերի և փորձաքննության եզրակացության հարաբերակցությունը: Գործնականում բուռն վեճերի տեղիք տվեց այն դեպքերը, երբ վարույթի մասնակիցները ստուգման ակտերը վիճարկում էին ՀՀ վարչական դատարանում, իսկ վերջինս էլ այն ֆորմալ չափանիշների տեսանկյունից ճանաչում էր անվավեր:

Ընդ որում, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասում (մինչև 2010թ. փոփոխություններ կատարելը) սահմանված էր. «Սույն օրենքը չի կարգավորում (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման և անցկացման (...) հետ կապված հարաբերությունները»:

ՀՀ արդարադատության նախարարությունը 20.05.2009թ. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծով (Պ629-20.05.2009-ՊԻ-010/0), առաջարկում էր նշված օրենքը կիրառել նաև քրեական դատավարության կարգով նշանակված ստուգումների անցկացման նկատմամբ: Նախագծի հիմնավորման մեջ նշված էր.

«ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն. «Քննիչը, մասնավորապես, լիազորված է (...) պահանջել կատարելու վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ»: Նշված իրավանորմը սահմանում է մեկ լիազորություն. քննիչը կարող է որոշում կայացնել վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ կատարելու մասին: Նշվածից բացի քրեական դատավարության օրենսգրքը որևէ այլ բան չի սահմանում: Այսինքն՝ այդ օրենսգրքը չի սահմանում և չէր էլ կարող սահմանել, թե այդ ստուգումն ի՞նչ կարգով պետք է ընթանա, ի՞նչ ժամկետներում, այդ ստուգման ժամանակ ստուգվողն իրավունքներ ունի, թե՞ չունի, ստուգման ժամանակ կատարվող ապօրինի գործողություններից կարո՞ղ է պաշտպանվել, թե՞ ոչ և ի՞նչ եղանակներով: Այսինքն՝ նշված բազմաթիվ հարցերը, որոնք ուղղակիո-

րեն առնչվում են մարդու իրավունքների հետ, քրեական դատավարության տիրույթից դուրս են, և դա ճիշտ է, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ ստուգվող անձը նույնիսկ քրեական դատավարության կարգով կարող է տվյալ վարույթի մասնակիցը չհանդիսանալ²:

Մինչև գործադիր իշխանության այս օրենսդրական փոփոխության նախագիծը կրնա նույնվեր, այս հարցին միջամտեց նաև ՀՀ սահմանադրական դատարանը:

2.2. Օրենսդրական փոփոխությունները ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. որոշումից հետո

Մասնավոր անձը ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկել է ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածն այն հիմնավորմամբ, որ դատավարական օրենքը ՀՀ Սահմանադրության 83.5.-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան բավարար հստակությամբ չի սահմանել քրեական գործի շրջանակներում ստուգումների իրականացման դեպքերը, պայմանները և կարգը:

ՀՀ սահմանադրական դատարանը 27.10.2009 թ. ՄԴՈ-836 որոշմամբ նշել է. «Դիմողը ՀՀ քր. դատ. օր.-ի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետին անդրադառնում է ոչ թե վիճարկվող նորմերի բովանդակության սահմանադրականության տեսանկյունից, այլ բարձրացնում է օրենսդրական բացի խնդիր: Դիմողի փաստարկները չեն վկայում վիճարկվող դրույթի անորոշության կամ ոչ իրավաչափ լինելու մասին: Տվյալ դրույթը կոչված է կարգավորելու քննիչի՝ որպես քրեական դատավարության մասնակցի և քրեական գործի նախաքննության շրջանակներում դրա բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված և պատասխանատու պաշտոնատար անձի լիազորությունը՝ վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողությունների կատարում պահանջելու վերաբերյալ, որպիսիք քննիչի գնահատմամբ կոնկրետ գործով կարող են անհրաժեշտ քննչական գործողություններ հանդիսանալ՝ քրեական գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմամբ պայմանավորված խնդիրներ լուծելու համար (ապացուցման ենթակա հանգամանքների պարզում, ապացույցների ձեռքբերում, դրանց գնահատում և այլն): Զննիչին օրենքով և վիճարկվող վերոհիշյալ նորմով այդպիսի լիազորություն վերապահելն իրավաչափ է, համապատասխանում է նրա գործառնություններին և ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում»:

ՀՀ սահմանադրական դատարանը, արձանագրելով, որ քրեական գործի նախաքննության շրջանակներում վերստուգումների, գույքագրումների և այլ ստուգողական գործողությունների կատարումն օբյեկտիվորեն կարող է առնչվել անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդրին, որոշել է, որ այդպիսի գործողությունների կատարման պայմանները (հիմքերը, համապատաս-

² <https://www.gov.am/files/meetings/2009/2861.pdf>

խան որոշման կայացման կարգն ու պայմանները) և կարգը (այդ թվում՝ արդյունքների արձանագրման) ենթակա են լրացուցիչ օրենսդրական կարգավորման: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգը մեխանիկորեն չի կարող տարածվել քրեադատավարական գործընթացների վրա՝ առանց հաշվի առնելու դրանց առանձնահատկությունները, անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության երաշխիքների ապահովումը, մյուս կողմից՝ խոչընդոտներ ստեղծել պետական իշխանության մարմինների գործառույթների լիարժեք իրականացման համար:

ՀՀ սահմանադրական դատարանի այս որոշումից հետո ՀՀ ազգային ժողովը 04.02.2010թ. ընդունեց ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-17-Ն օրենքը, որով սահմանվեց քրեական դատավարության կարգով նշանակված ստուգումների անցկացման կարգ:

2.3. 2020թ. օրենսդրական փոփոխությունները

ՀՀ քր. դատ. օր.-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 01.06.2020թ. ՀՕ-299-Ն օրենքով ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ.

«5) ստուգումներ, վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ կատարելու որոշում ընդունել, եթե առկա են քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ քրեական գործով սպացուցման ենթակա մի շարք հանգամանքներ (հանգամանք) կարող են (է) հերքվել կամ հաստատվել տվյալ ստուգմամբ, վերստուգմամբ, գույքագրմամբ կամ այլ ստուգողական գործողությամբ: Կայացված որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին, որի օրինականությունը ենթակա է ստուգման յոթնօրյա ժամկետում»:

Նշված փոփոխության նախաձեռնության հեղինակները հետևյալ կերպ են հիմնավորում այս փոփոխությունը.

«ՀՀ ՊԵԿ ներկայացվող համալիր հարկային ստուգում իրականացնելու մասին որոշումներ շատ դեպքերում ստուգում իրականացնելու առումով պատճառաբանված չեն՝ բացակայում են որոշմամբ նշված հարկ վճարողի մոտ համալիր հարկային ստուգում (վերստուգում) կատարելու հիմքերը, հիմնավորումները: Այսինքն՝ նշված որոշումներում ներկայացվում են քրեական գործ հարուցելու հիմքերը, հիմնավորումները, այնուհետև առաջադրվում է հարկային մարմնի կողմից պարզաբանման ենթակա հարցերի շրջանակը՝ առանց անդրադառնալու այն պատճառահետևանքային կապին, որը կարող է առկա լինել հարկային ստուգմամբ պարզաբանման ենթակա հանգամանքների և այդ քրեական գործի բազմակողմանի և օբյեկտիվ հանգուցալուծման միջև, կամ քննիչի որոշմամբ

առաջարկվում է ստուգում կատարել նաև այն տնտեսվարող սուբյեկտների մոտ, որոնք որոշակի կապ ունեն տվյալ քրեական գործով անցնող անձանց հետ, սակայն նշված ընկերությունների կողմից հարկային խախտումներ կատարված լինելու մասին որևէ տվյալ առկա չէ գործում: Այս դեպքում ևս պարզ չէ, թե դրանք ինչքանով առնչություն ունեն տվյալ քրեական գործի հետ և առաջարկվող ստուգմամբ բացահայտված հանգամանքներն ինչ էական ազդեցություն կարող են ունենալ տվյալ քրեական գործի համար:

Միևնույն ժամանակ, հանդիպում են դեպքեր, երբ, օրինակ, քննիչի կողմից ստուգման որոշմամբ պահանջվում է պարզել շահաբաժին բաշխել-չբաշխելու և համալիր հարկային ստուգման շրջանակներից չբխող հարցեր:

Չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ հիմք ընդունելով ՀՀ քր. դատ. օր.-ի 55.1-ին հոդվածի կանոնակարգումը, համաձայն որի՝ քննիչի որոշումները ենթակա են պարտադիր կատարման, այդ որոշումները, ներկայացվում են կատարման, սակայն վերջիններիս պատճառաբանված չլինելու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ հետագայում քննիչի որոշման հիման վրա իրականացված հարկային ստուգման (վերստուգման) արդյունքում կայացված ստուգման ակտի՝ նշված հիմքերով ոչ իրավաչափ ճանաչման համար:

(...)

Նշված օրենսդրական ամրագրումը կարող է իր դրական ազդեցությունն ունենալ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց բնականոն գործունեությունն իրականացնելու տեսանկյունից, քանի որ կկրճատվեն հարկային մարմնի կողմից վերջիններիս գործունեության անհարկի միջամտությունները՝ հաշվի առնելով այն, որ այսուհետ ստուգումներ (բացի ըստ ռիսկայնության աստիճանի՝ տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների) կիրականացվեն միայն քննիչի կողմից ստուգման անհրաժեշտությունը պատճառաբանելու և հիմնավորելու պարագայում:

(...)

Նախագծով նախատեսվել է ստուգում (վերստուգում) նշանակելու մասին որոշումների՝ վերահսկող դատախազի կողմից վերանայելու հնարավորություն՝ մասնավորապես հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետը: Հսկող դատախազը ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրավունք կունենա վերացնել այն որոշումները, որոնք չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին (քրեական գործի հանգուցալուծման տեսանկյունից չհիմնավորված, չպատճառաբանված՝ հարկային մարմնի կողմից պարզաբանման ենթակա հարցերի անհստակությամբ և (կամ) բացակայությամբ)»³:

³ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11281&Reading=0>

2.4. Նոր քր. դատ. օր.-ի կարգավորումը

ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի նախագծում ի սկզբանե նախատեսված չէր քննիչի կողմից ստուգում նշանակելու մասին լիազորություն: Նախագծի հեղինակներն իրավացիորեն հիմք էին ընդունել այն հիմնավորումը, որ քննիչն անհրաժեշտության դեպքում կարող է նշանակել փորձաքննություն: Եթե մինչև քրեական վարույթ նախաձեռնելը ստուգումներ չեն կատարվել, ապա քննիչը փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող է քննչական գործողությունների (առգրավում, խուզարկություն և այլն) միջոցով ձեռք բերել, իսկ անհրաժեշտության դեպքում նա կարող է փաստաթղթերի ձեռք բերման գործընթացին մասնակից դարձնել նաև փորձագետին:

Այս հարցի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեում դեռևս 2016-2017թթ. փորձագետների մասնակցությամբ կազմակերպվել էր քննարկում, սակայն փորձագետները և քննիչները դեմ էին առանց ստուգման ակտի անմիջապես փորձաքննություն նշանակելու մոտեցմանը: Փորձագետների և քննիչների ներկայացրած պատճառաբանությունները խիստ վիճելի էին. եթե այդ պատճառաբանությունները ներկայացնենք ուղիղ խոսքով, ապա փորձագետները չէին ցանկանում կորցնել ստուգման ակտը «վերստուգողի» կարգավիճակը և վերածվել առաջնային հաշվարկներ կատարող մարմնի, իսկ քննիչները պարզապես չէին ցանկանում, փորձագետի մասնակցությամբ փաստաթղթեր հավաքելով, ավելացնել իրենց ծանրաբեռնվածությունը:

Թերևս այս տրամաբանությունն աշխատեց, երբ Նախագիծն ընդունելու ժամանակահատվածում ՀՀ քր. դատ. օր.-ի 41-րդ հոդվածի 1-ին մասի նախավերջին կետում, որպես քննիչի լիազորություն, ավելացվեց հետևյալ դրույթը. «28) որոշում է կայացնում օրենքով նախատեսված ստուգում կամ վերստուգում կատարելու մասին»: Ընդ որում, օրենքով կարգավորվեց նաև վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կատարված ստուգման կամ վերստուգման արդյունքների ապացուցողական նշանակության հարցը (այս մասին հաջորդիվ):

2.5. Օրենսդրական փոփոխությունների նախագիծը

Ներկայումս շրջանառվում է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքում վերացնել քննիչի որոշմամբ հարկային ստուգում (վերստուգում) նշանակելու հնարավորությունը, իսկ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով, չկատարված հարկային պարտավորությունների բնույթը ու չափը պարզել բացառապես փորձաքննություն նշանակելու ճանապարհով:

Թերևս այս օրենսդրական փոփոխության նպատակը քրեական և վարչական վարույթներն իրարից հատակ տարանջատելն է, քրեական վարույթում որևէ հանգամանքի պարզման համար հատուկ գիտելիքների անհրաժեշտության դեպքում այդ վարույթից դուրս վարչական գործիքակազմի օգտագործումը բացառելը, քրե-

ական վարույթի անկախացումը ստուգման ակտի՝ այլ դատավարության կարգով վիճարկման հանգամանքից: Դրանով պայմանավորված՝ նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքում բացառել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից հարկային ստուգում նշանակելու հնարավորությունը՝ որպես արտապահանջային ստուգման ինքնուրույն հիմք՝ այդ հարցերը թողնելով բացառապես փորձաքննության ճանապարհով պարզելուն:

Այս փոփոխություններով մասամբ փորձ է արվում անցում կատարելու այն վիճակին, որն ի սկզբանե առաջարկվում էր ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի նախագծում:

Նախագծով փոփոխություններ է առաջարկվում բացառապես հարկային ստուգումների մասով, և ստուգումների այլ տեսակների մասով որևէ կարգավորում չի նախատեսվում: Միևնույն ժամանակ, ՀՀ քր. դատ. օր.-ի 41-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված քննիչի ընդհանուր լիազորությունը՝ օրենքով նախատեսված ստուգում կամ վերստուգում կատարելու մասին որոշում կայացնելու, շարունակելու է գործել այլ ստուգումների մասով:

Կարծում ենք, որ հարցը պահանջում է համընդհանուր մոտեցում և չի կարող սահմանափակվել բացառապես հարկային ստուգումներ նշանակելու քննիչի հնարավորության բացառմամբ:

3. Ստուգման ակտի ապացուցողական նշանակությունը

3.1. Ընդհանուր դրույթներ

Երկար տարիներ քննիչի նշանակված ստուգման արդյունքում կազմված ակտի դատավարական, մասնավորապես՝ ապացուցողական նշանակությունը եղել է անորոշ և վիճելի: Ստուգման ակտն արդյոք ապացո՞ւյց էր, թե՞ ոչ: Այս հարցի պատասխանից էր կախված այն, թե ստուգման ակտից հետո ծագելու է համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն, թե ոչ: Եթե ստուգման ակտն ապացույց չէր, ապա քննիչը ստուգման ակտը «դատավարականացնելու», այսինքն՝ ապացուցողական կարգավիճակ տալու նպատակով ստիպված էր նշանակել դատահաշվապահական փորձաքննություն:

ՀՀ-ում մինչև նոր օրենսգրքի ընդունումը գործնականում ստուգման ակտը չի համարվել ապացույց, որի պայմաններում քննիչը ստուգման ակտի հիման վրա նշանակում էր փորձաքննություն («ստուգում-փորձաքննություն»): Ընդ որում՝ նման փորձաքննությունը ոչ թե իրական դատական փորձաքննություն էր, այլ ավելի շատ նման էր մասնագիտական հսկողության, քանի որ փորձագետը պարզում էր հարկային մարմնի կազմած ստուգման ակտի հիմնավորվածությունը, այլ կերպ ասած՝ փորձագետը վերստուգում էր հարկային մարմինների ստուգման արդյունքները: Ընդ որում՝ փորձագետի եզրակացությունը բովանդակային առումով մեծ մասամբ ստուգման ակտի վերարտադրությունն էր:

«Ստուգում-փորձաքննություն» պրակտիկայի միակ դրական կողմն այն էր,

որ քննիչը հնարավորություն էր ստանում ստուգման ակտի հիման վրա ձեռք բերել քրեադատավարական ապացույց՝ փորձագետի եզրակացություն: Սակայն նման պրակտիկան առավել շատ աչքի էր ընկնում բացասական կողմով, քանի որ «ստուգում-փորձաքննություն» պրակտիկայի դեպքում նախաքննության տևողությունն անհամաչափ երկարաձգվում էր:

Ստուգման արդյունքների ապացուցողական նշանակության հարցում որոշակիություն մտցվեց ՀՀ նոր քր. դատ. օր.-ով:

3.2. Ստուգման ակտը՝ որպես արտավարության փաստաթուղթ

ՀՀ նոր քր. դատ. օր.-ով ոչ միայն պահպանվեց քննիչի՝ ստուգումներ նշանակելու լիազորությունը, այլև էքսպլիցիտ սահմանվեց, որ դրա արդյունքում ձեռք բերված փաստաթղթերը քրեադատավարական ապացույց են՝ արտավարության փաստաթուղթ: ՀՀ քր. դատ. օր.-ի 96-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«Քրեական վարույթի շրջանակներից դուրս, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կատարված ստուգման կամ վերստուգման արդյունքները կարող են ճանաչվել արտավարության փաստաթուղթ և կցվել վարույթի նյութերին միայն այն դեպքում, երբ առանց դրանց վարույթի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզումն օբյեկտիվորեն անհնար է»:

Այս նորմում օրենսդիրն առանձնացրել է ստուգման երկու ռեժիմ

1) քրեական վարույթի շրջանակներից դուրս նշանակված և կատարված ստուգումներ (պայմանական անվանենք՝ վարչական ստուգումներ):

2) քրեական վարույթի շրջանակներում նշանակված և այդ վարույթից դուրս կատարված ստուգումներ (պայմանական անվանենք՝ քվազիդատավարական կամ կիսադատավարական ստուգումներ):

Քրեական վարույթի շրջանակներից դուրս կատարված ստուգումը վարչական համապատասխան օրենսդրության հիման վրա կատարված ստուգումներն են, այսինքն՝ վարչական վարույթի շրջանակներում կատարված ստուգումները: Եթե վարչական մարմինը ստուգումների արդյունքում պարզում է հանցագործության հատկանիշներ, սպա դատավարական օրենքով սահմանված կարգով հաղորդում է ներկայացնում քննչական մարմիններին, իսկ ստուգման արդյունքները (փաստաթղթերը) կցում է հաղորդմանը կամ հետազայում փոխանցում է վարույթն իրականացնող մարմնին: ՀՀ քր. դատ. օր.-ով թեև նշվել է, որ վարչական և կիսադատավարական ստուգման արդյունքներն արտավարության փաստաթուղթ են, սակայն նույն օրենսդիրն այս հարցում նախատեսել է այնպիսի կարգավորումներ, որոնցով հարվածի տակ է դրել ստուգման արդյունքների ապացուցողական նշանակությունը:

**3.3. Ստուգման ակտի՝ որպես արտավարության փաստաթուղթ
օգտագործելու խոչընդոտները և սահմանափակումները**

3.3.1. Ապացույցի տեսակի և ձևը բերման եղանակի աններդաշնակությունը: Կիսադատավարական ստուգումների արդյունքները՝ որպես արտավարության փաստաթուղթ ճանաչելու Օրենսդրի մոտեցումը մասնավորապես անհամերաշխ է արտավարության փաստաթղթերի օրենսդրական բնորոշման և ապացույց հավաքելու դատավարական եղանակների օրենսդրական կարգավորման հետ:

1) Օրենսդիրն արտավարության փաստաթուղթը բնորոշել է հետևյալ կերպ. քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ պարունակող թղթային (...) գրառում, որը **ձևավորվել է տվյալ քրեական վարույթի շրջանակներից** դուրս (ՀՀ քր. դատ. օր.-ի 96-րդ հոդվածի 1-ին մաս): Կիսադատավարական ստուգումները նախաձեռնում է քննիչը, սակայն այն իրականացնում է իրավասու վարչական մարմինը, օրինակ՝ հարկային մարմինը: Կիսադատավարական ստուգումներն այս իմաստով քրեական վարույթի շրջանակներից դուրս չեն, իսկ մինչև ստուգում նշանակելը այդ արդյունքներն օբյեկտիվորեն գոյություն չունեն:

Ի տարբերություն կիսադատավարական ստուգման՝ վարչական ստուգման արդյունքները դասական արտավարության փաստաթղթեր են, քանի որ ձևավորվել են քրեական վարույթի շրջանակներից դուրս:

2) Ըստ Օրենսդրի՝ ապացույցները հավաքվում են քրեական վարույթի ընթացքում՝ օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողությունների կատարման միջոցով (...) (ՀՀ քր. դատ. օր.-ի 103-րդ հոդվածի 1-ին մաս): ՀՀ քր. դատ. օր.-ի 7-րդ բաժնի (ապացուցողական գործողություններ) կառուցվածքից պարզ է դառնում, որ ապացուցողական են համարվում քննչական գործողությունները, գաղտնի քննչական գործողությունները և փորձաքննությունները: Քննչական գործողությունների սպառիչ ցանկը նախատեսված է ՀՀ քր. դատ. օր.-ի 208-րդ հոդվածի 1-ին մասում, որի մեջ ստուգում կատարելը որպես այդպիսին նախատեսված չէ: Ասվածը նշանակում է, որ քննիչի որոշման հիման վրա ստուգում կատարելն ինքնին չի համարվում ապացույց հավաքելու եղանակ:

Ստացվում է, որ Օրենսդիրը մի կողմից՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ իրականացված ստուգման արդյունքները համարել է ապացույց, մյուս կողմից՝ չի նախատեսել այդ ապացույցի հավաքման եղանակը: Այս տեսանկյունից ապացույցի տեսակի և ապացույցի հավաքման եղանակի միջև ծագում է աններդաշնակություն:

3.3.2. Ստուգման ակտը՝ որպես ապացուցման վերջին միջոց: Վարչական և կիսադատավարական ստուգման արդյունքները կարող են որպես ապացույց ճանաչվել **«միայն այն դեպքում, երբ առանց դրանց վարույթի համար նշանա-**

կույություն ունեցող որևէ հանգամանքի պարզումն օբյեկտիվորեն անհնար է» (ՀՀ քր. դատ. օր.-ի 96-րդ հոդվածի 4-րդ մաս): Օրենսդիրը ստուգման արդյունքները ճանաչում է որպես սպացույց, եթե դրանք վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքը պարզելու «վերջին միջոցն են»: Ստուգման արդյունքները կարող են ճանաչվել որպես սպացույց, եթե դատավարական եղանակներով անհնարին է պարզել վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքը:

Օրենսդիրը, «միայն օբյեկտիվ անհնարինության» պայման նախատեսելով, գրեթե զրոյացրել է ստուգման արդյունքների՝ որպես քրեադատավարական սպացույց ճանաչելու և օգտագործելու գործնական հնարավորությունը: Նախ՝ նշված հոդվածում խոսվում է «օբյեկտիվ անհնարինության» մասին, որը նեղացնում է այդ պայմանի գործողության ոլորտը, քանի որ այն վերաբերում է ոչ թե իրավաբանական անհնարինությանը կամ «գործնական» անհնարինությանը, այլ միայն ֆիզիկական անհնարինությանը⁴:

Բացի այդ, ստուգման արդյունքներում նշված և վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները, որպես կանոն, հնարավոր է պարզել նաև դատավարական փորձաքննության միջոցով, այսինքն՝ հնարավոր է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքը պարզել առանց այդ ստուգման արդյունքների: Իսկ դա նշանակում է, որ ստուգման արդյունքները տվյալ հանգամանքներն սպացուցող վերջին միջոցը չեն, ուստի չեն կարող որակվել որպես դատավարական սպացույց:

Իսկ ո՞ր դեպքերում ստուգման արդյունքները կարող են համարվել վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների սպացուցման վերջին միջոց: Նման բան հնարավոր է բացառիկ դեպքերում, երբ, օրինակ, ստուգումից հետո հաշվապահական, հարկային փաստաթղթերի բոլոր օրինակներն այրվել են, կամ էլեկտրոնային համակարգի խափանման հետևանքով ստուգման համար հիմք հանդիսացած բոլոր էլեկտրոնային փաստաթղթերը ոչնչացվել են, և բացակայում են դրանց թղթային օրինակները: Այս դեպքում ստուգման արդյունքները, օրինակ՝ ստուգման ակտը, դառնում են վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների սպացուցման միակ միջոցը, ուստի պետք է ճանաչվեն որպես արտավարության փաստաթղթեր:

Մեկ այլ հիպոթետիկ իրավիճակ: Վարչական ստուգումն իրականացրել է Հայաստանում տվյալ ոլորտի միակ ձեռնհաս մասնագետը (հանրային պաշտոնատար անձը), որն այդ բնագավառում կրթություն է ստացել արտասահմանում: Զննիչը նշանակում է փորձաքննություն, սակայն փորձագետը կազմում է առաջադրված հարցերին պատասխանելու անհնարինության մասին եզրակացություն

⁴ Այս մասին տե՛ս Ղամբարյան Ա., Հանրային իրավունքի զարգացումն օրենքին հակառակ (contra legem) «օրենքը չի պահանջում անհնարինը» իրավական մաքսիմի հիման վրա // Բանբեր արդարադատության ակադեմիայի, № 1 (9), 2023, էջեր 47-67:

(հիմնավորում), քանի որ իրեն առաջադրված հարցերը դուրս են իր հատուկ գիտելիքների և հմտությունների շրջանակներից (ՀՀ քր. դատ. օր.-ի 259-րդ հոդվածի 3-րդ մաս): Տվյալ պարագայում քննիչը չի կարող փորձագետ նշանակել ստուգում իրականացրած մասնագետին, քանի որ օրենքով սահմանված է, որ փորձագետը չի կարող մասնակցել վարույթին, եթե առկա են այլ հանգամանքներ, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ վարույթի հետ կապված նրա անկողմնակալության մեջ (ՀՀ քր. դատ. օր.-ի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Անկասկած, ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձը դատավարական փորձաքննության շրջանակներում չի կարող անկողմնակալ լինել իր կազմած ակտի վերաբերյալ: Նման իրավիճակում ստուգման արդյունքները համարվում են վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու վերջին միջոցը, ուստի քննիչը դրանք կարող է ճանաչել որպես արտավարության փաստաթուղթ:

4. Ստուգում նշանակելու որոշումը և ստուգման ակտը դատական կարգով բողոքարկելը և դրա քրեադատավարական հետևանքները

4.1. Ընդհանուր դրույթներ

Այս բաժնում անդրադարձ է կատարվում ստուգում նշանակելու մասին քննիչի որոշման բողոքարկմանը դատավարական կառուցակարգին, հսկող դատախազի կողմից քննիչի այդ որոշումը վերացնելու դատավարական հետևանքներին, ինչպես նաև քննարկվում են քրեական վարույթում ստուգման ակտի գնահատման առանձնահատկությունները և ստուգման ակտի վարչական անվավերության քրեադատավարական հետևանքները:

4.2. Ստուգում նշանակելու մասին քննիչի որոշման բողոքարկումը

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ ՀՀ քր. դատ. օր.-ին համապատասխան ստուգումը նշանակելու մասին քննիչի որոշումը բողոքարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ հարկային օրենսգրքի 440-րդ հոդվածի 3-րդ մասը:

Քրեական վարույթի շրջանակներում ստուգում, այդ թվում՝ հարկային ստուգում նշանակելու քննիչի որոշման իրավաչափության գնահատումը կարող է իրականացվել բացառապես քրեական վարույթի շրջանակներում և դուրս է ՀՀ վարչական դատարանի իրավասության շրջանակներից: Օրինակ՝ թիվ ՎԳ/4027/05/19 վարչական գործով դատարաններն արձանագրել են, որ Արագածոտնի մարզային քննչական վարչության պետի տեղակալի կողմից թիվ 58156781 քրեական գործի շրջանակներում մասնագիտական ստուգում նշանակելու մասին որոշման իրավաչափությանը կարող էին քննիչի վերոնշյալ որոշման բողոք-

քարկման հիմք հանդիսանալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով, սակայն ոչ համալիր ստուգման հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման և դրա արդյունքում կայացված ստուգման ակտի իրավաչափության վիճարկման համար: Դատարանները փաստել են, որ հայցվոր կողմը զրկված չէր քրեադատավարական կառուցակարգերով մասնագիտական ստուգում նշանակելու մասին որոշումը բողոքարկելու իրավունքից:

Ստուգում նշանակելու մասին քննիչի որոշումը՝ որպես վարության ձև, ենթակա է բողոքարկման դատախազական հսկողության կարգով: Այսինքն՝ վարույթի իրավասու մասնավոր մասնակիցը քննիչի այդ որոշումը կարող է բողոքարկել հսկող դատախազին, իսկ վերջինիս կողմից բողոքը մերժվելու դեպքում նաև վերադաս դատախազին:

Իսկ ինչ վերաբերում է ստուգում նշանակելու մասին քննիչի որոշման դատական կարգով բողոքարկմանը, ապա հարկ է նկատել, որ այս որոշումը նախատեսված չէ դատական բողոքարկման ենթակա ակտերի շրջանակում (ՀՀ քր. դատ. օր.-ի 299-րդ հոդվածի 1-ին մաս): Մինևույն ժամանակ դժվար է պատկերացնել իրավիճակ, որ ստուգում նշանակելու մասին քննիչի որոշման հետաձգված բողոքարկումը՝ վիճարկումը դատաքննության ընթացքում, կլինի անհնար կամ բողոքարկողին ակնհայտորեն կզրկի իր իրավաչափ շահերն արդյունավետ պաշտպանելու իրական հնարավորությունից (ՀՀ քր. դատ. օր.-ի 299-րդ հոդվածի 2-րդ մաս): Ասվածից կարելի է ենթադրել, որ ստուգում նշանակելու մասին քննիչի որոշումը մինչդատական վարույթում, որպես կանոն, դատական վերահսկողության օբյեկտ չէ:

Պետք է արձանագրել, որ դատաքննության ընթացքում քննիչի՝ ստուգում նշանակելու մասին որոշումը կարող է վիճարկվել հետաձգված ռեժիմով, այսինքն՝ կարող է վիճարկվել ստուգման ակտի՝ որպես արտավարության փաստաթղթի, ինչպես նաև դրա հիման վրա ստացված այլ տվյալների թույլատրելիության վիճարկման համատեքստում:

4.3. Ստուգում նշանակելու որոշման վերացումը և դրա դատավարական հետևանքները

4.3.1. Ստուգում նշանակելու որոշումը վերացնելու ընդհանուր կարգը:

1998թ. ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված էր, որ քննիչը ստուգում նշանակելու մասին որոշումը քսանչորս ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին: Այդ որոշման օրինականությունը դատախազը ստուգման յոթնօրյա ժամկետում (նախկին ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետ): 2021թ. ՀՀ քր. դատ. օր.-ում ստուգում նշանակելու որոշման նկատմամբ դատախազական հսկողության հատուկ նորմեր նախատեսված չեն, ուստի դատախազն այդ ակտի նկատմամբ հսկողություն է իրականացնում ընդհանուր կարգով:

Նախաքննության ընթացքում դատախազը ստուգում նշանակելու մասին

քննիչի որոշման մասին կարող է տեղեկանալ ինչպես բողոքի առկայության, այնպես էլ իր նախաձեռնությամբ վարույթի նյութերը ուսումնասիրելու (ստուգելու) դեպքում:

Հսկող դատախազը ստուգում նշանակելու մասին քննիչի որոշումը կարող է վերացնել, եթե այն անօրինական է կամ անհիմն (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 38-րդ, մաս 1-ին, կետ 11-րդ): Ստուգում նշանակելու մասին քննիչի որոշումը կարող է անօրինական համարվել, եթե, օրինակ, այն կայացրել է տվյալ վարույթով իրավասություն չունեցող քննիչը (այս մասին հաջորդիվ), կամ որոշումը հիմնավորված (պատճառաբանված) չէ :

4.3.2. Ստուգում նշանակելու որոշումը վերացնելու հետևանքները: Դատախազի կողմից ստուգում նշանակելու որոշման վերացնելու հետևանքները կախված են ստուգումն ավարտված (սկսված) լինելու/չլինելու հանգամանքից: Գործնականում դատախազը ստուգում նշանակելու մասին քննիչի որոշման մասին կարող է տեղեկանել ինչպես այն ժամանակ, երբ ստուգումը դեռ չի ավարտվել (կամ չի էլ սկսվել), այնպես էլ այն ժամանակ, երբ ստուգումն արդեն ավարտվել է, և ստուգման ակտը կցվել է վարույթի նյութերին: Ուստի ստուգում նշանակելու որոշումը վերացնելու հետևանքները պետք է քննարկել հետևյալ իրավիճակների համար.

1) քննիչը նշանակել է ստուգում, սակայն այն դեռ չի ավարտվել (առկա չէ ստուգման ակտ).

2) քննիչի կողմից նշանակված ստուգումն ավարտվել է, և ստուգման ակտը կցվել է քրեական վարույթին:

Այն դեպքում, երբ ստուգումը դեռ չի ավարտվել, իսկ հսկող դատախազը ստուգում նշանակելու որոշումը ճանաչում է ոչ իրավաչափ և վերացնում է այն, սպա դրա հետևանքն այն է, որ հսկող դատախազը, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, հանձնարարություն է տալու քննիչին նրա անօրինական որոշումը վերացնելու դեպքում դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ: Այսինքն՝ հսկող դատախազը որպես անօրինական որոշման վերացման հետևանքի չեզոքացման միջոց կարող է հանձնարարել դեռևս չավարտված ստուգման անկատար թողնելը, որն իրականացվում է վարույթ իրականացնող մարմնի միջոցով՝ վերջինիս այդ մասին հանձնարարություն տալով: Դատախազի այդ հանձնարարության հիման վրա քննիչը գրություն է հասցեագրում ստուգում իրականացնող վարչական մարմնին՝ ստուգումն անկատար թողնելու վերաբերյալ:

Գործնականում քրեական վարույթ իրականացնող մարմնի՝ ստուգումն անկատար թողնելու գրության հիման վրա ընթացքում գտնվող ստուգման վարույթը կարճվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով նախատեսված հիմքով, այն է՝

օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ ստուգումն արդեն ավարտվել է, և ստուգման ակտը կցվել է վարույթի նյութերին, ապա դատախազը նախ՝ վերացնում է ստուգում նշանակելու որոշումը, երկրորդ՝ ձեռնարկում է օրենքով նախատեսված միջոցներ ստուգման ակտը (եթե ճանաչվել է արտավարության փաստաթուղթ) անթույլատրելի ապացույց ճանաչելու կապակցությամբ՝ որպես անօրինական որոշման հետևանքի չեզոքացման եղանակ: Այլ կերպ ասած՝ որպեսզի այս իրավիճակում արտավարության փաստաթուղթը (ստուգման ակտը) անթույլատրելի ճանաչվի, դատախազը պետք է նախ՝ վերացնի ստուգում նշանակելու մասին որոշումը, այնուհետև՝ անդրադառնա դրա հետևանքների չեզոքացման հարցին:

Այսպիսով, հսկող դատախազի կողմից ստուգում նշանակելու մասին քննիչի որոշման վերացումը մի դեպքում պետք է հանգեցնի դեռևս չավարտված ստուգումը դադարեցնելուն, իսկ մյուս դեպքում, երբ առկա է ստուգման ակտ, ապա այդ ակտի՝ որպես արտավարության ապացույցի անթույլատրելիության:

4.4. Ստուգման ակտը չ՛վ վարչական դատարանում բողոքարկելու միջնորդային հարցերը

4.4.1. Ստուգման ակտը՝ որպես վարչական ակտ և դրա բողոքարկումը:

Նախ փաստենք, որ նույնիսկ քննիչի նախաձեռնած ստուգման արդյունքում կայացված միջամտող ակտը համապատասխանում է վարչական ակտին ներկայացվող պահանջներին, և այն կարող է վիճարկվել վարչաիրավական հարաբերությունների շրջանակում: Ներկայումս քիչ չեն դեպքերը, երբ քրեական վարույթի տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող ստուգման ակտը՝ որպես վարչական ակտ, քրեական վարույթին գուգահեռ վիճարկվում է վարչական կամ դատական կարգով: Վարչական մարմինը կամ չ՛վ վարչական դատարանը կարող են այդ ակտերը ճանաչել անվավեր, որի պարագայում ծագում է այն հարցը, թե վարչական ակտը (ստուգման ակտը) անվավեր ճանաչելն ի՞նչ քրեատավարական հետևանքներ կարող է առաջացնել, մասնավորապես՝ վարչական իրավունքի շրջանակներում անվավեր ճանաչված ստուգման ակտը կարո՞ղ է արդյոք քրեական վարույթում որպես թույլատրելի ապացույց դրվել անձի մեղադրանքի հիմքում:

Այս հարցին պատասխանելու մեթոդաբանական հիմքը վարչական և քրեատավարական իրավունքի ճյուղերի ինքնավարության (ավտոնոմիայի) սկզբունքն է:

4.4.2. Ստուգման ակտի անվավերության հետևանքներն իրավունքի ճյուղերի ինքնավարության սկզբունքի համատեքստում: Իրավունքի ճյուղերի ինքնավարության սկզբունքը հնարավորություն է տալիս իրավունքի տարբեր ճյուղերում միևնույն օբյեկտը ուսումնասիրել և գնահատել իրենց կարգավորման առարկայի և խնդիրների տեսանկյունից: Մի իրավունքի ճյուղի շրջանակներում տրված գնահատականն ինքնին չի տեղափոխվում մյուս իրավունքի ճյուղ, եթե այդ իրավունքի ճյուղի կարգավորման առարկան և խնդիրները էապես տարբերվում են⁵:

Այս տրամաբանությամբ ստուգման ակտի իրավաչափության գնահատման չափանիշները ՀՀ վարչական իրավունքի և ՀՀ քրեական դատավարության իրավունքի ճյուղերի կարգավորման առարկայի և խնդիրների տեսանկյունից էապես տարբերվում են: ՀՀ վարչական դատարանը ստուգման ակտի իրավաչափությունը գնահատում է վարչական իրավունքի նորմերի հիման վրա, որտեղ գործում են քրեադատավարական ապացուցման կանոններից էապես տարբերվող այլ կանոններ: Քրեական վարույթում ստուգման ակտը գնահատվում է ոչ թե իբրև վարչական ակտ՝ ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքով նախատեսված վարչական ակտին ներկայացվող պահանջներին համապատասխանելու տեսանկյունից, այլ այնպես, ինչպես քրեական վարույթում առկա մյուս բոլոր ապացույցները, մասնավորապես, ՀՀ քր. դատ. օրով սահմանված չափանիշներին՝ վերաբերելիությանը, թույլատրելիությանը, հավաստիությանը համապատասխան:

Ուստի, ՀՀ վարչական դատարանի կողմից ստուգման ակտն անվավեր ճանաչելու հետևանքներն ինքնաշխատ կերպով չպետք է տեղափոխել քրեական դատավարության ոլորտ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատարանի կողմից ստուգման՝ որպես վարչական ակտի անվավերությունն ինքնին չի նշանակում, որ այդ ակտը քրեական դատավարությունում դառնում է օգտագործման համար անպիտան (անթույլատրելի):

Նման իրավիճակում քրեական վարույթն իրականացնող մարմինը քրեադատավարական ապացուցման չափորոշիչների հիման վրա պետք է գնահատի ՀՀ վարչական դատարանի կողմից արձանագրված խախտումների բնույթը և ինքնուրույն գնահատի, թե՞ արդյոք դրանք խոչընդոտում են ստուգման ակտը քրեադատավարական նպատակներով օգտագործել, թե՞ ոչ:

Քրեական դատավարությունում ստուգման ակտի՝ որպես ապացույցի թույլատրելիությունը որոշելիս ստուգվում է ինչպես այդ որոշման՝ դատավարական

⁵ Гамбарян А. С., Даллакян Л. Г., Трансгрессия законодательных терминов и дефиниций в контексте отраслевой автономии // Государство и право. 2018. № 12. С. 93-103, Ղամբարյան Ա., Խանդակյան Ռ., Վարչական և քրեական դատարանների իրավասությունների (վարույթների ենթակայության) սահմանազատման հիմնահարցերը // Դատական իշխանություն: 2022, № 4-6 (274-276), էջեր 15-29:

եղանակով ձեռք բերելու օրինականությունը, այնպես էլ ստուգման ակտի՝ ճյուղային օրենսդրության ֆորմալ-իրավաբանական պահանջներին համապատասխանելը: Քրեական վարույթի ընթացքում ստուգման ակտը՝ որպես արտավարության փաստաթուղթ, գնահատվում է ապացույցի ընդհանուր հատկանիշների՝ վերաբերելիության, թույլատրելիության և հավաստիության տեսանկյունից: Եթե քրեական վարույթն իրականացնող մարմինը եզրակացնում է, որ ստուգման ակտը կայացվել է ճյուղային օրենսդրության այնպիսի էական խախտումներով, որոնք առնչվում են հիմնական իրավունքներին, ապա այն ճանաչում է անթույլատրելի ապացույց:

Ընդ որում, նույն ճյուղային ինքնավարության սկզբունքի տեսանկյունից ստուգման ակտը՝ որպես ապացույց, անթույլատրելի ճանաչելն ունի բացառապես քրեադատավարական նշանակություն. այդ ապացույցը չի կարող դրվել մեղադրանքի հիմքում: Ապացույցն անթույլատրելի ճանաչելը չի առաջացնում վարչաիրավական հետևանքներ, այսինքն՝ ստուգման ակտը վարչաիրավական հարաբերություններում շարունակում է գործել: Ընդ որում, այդ նպատակով պետք է տարբերակել երկու իրավիճակ.

1) քրեական վարույթում՝ որպես արտավարության փաստաթուղթ ճանաչված ստուգման ակտը ճանաչվել է անվավեր.

2) քրեական վարույթում ստուգման ակտի հիման վրա ձեռք է բերվել փորձագետի եզրակացություն, իսկ ստուգման ակտը ճանաչվել է անվավեր:

4.4.3. Ստուգման ակտի անվավերության հանգեցրած խախտումների քրեադատավարական տաքսացիան: Եթե ստուգման ակտը՝ որպես վարչական ակտ, անվավեր է ճանաչվել, ապա անվավերության հանգեցրած խախտումները պետք է տաքսացիայի (գնահատման⁶) ենթարկվեն նաև քրեական վարույթի շրջանակներում:

Նկատի ունենալով, ոչ վարչական իրավունքում ստուգման ակտը կարող է անվավեր ճանաչվել ինչպես վարության (ընթացակարգային), այնպես էլ նյութական նորմերի խախտումների հիմքով, ուստի դրանք պետք է քրեադատավարական վերլուծության ենթարկել առանձին-առանձին:

(ա) Վարչական իրավունքի վարության նորմերի խախտման քրեադատավարական տաքսացիան: Քրեական դատավարությունում ապացույցների թույլատրելիության և դրանց օգտագործման սահմանափակման հետ կապված հարցերը կանոնակարգվում են ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածով:

⁶ СУЧ(Ф)СУՑԻԱ [таксація < գերմ. Taxation < լատ. taxare գնահատելի գ. 1. (ֆին.): Գնահատում, սակորոշում, սակադրում, գնորոշում: 2. (մսնգ.): Որակի ու քանակի որոշում: Հայրապետյան Ա.Պ., Օտար բառերի բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն): Գիտ. խմբ. Ա.Սարգսյան. Եր.: Հեղինակային հրատ., 2011, էջ 553:

Վարչական իրավունքի վարութային նորմերի խախտումների քրեադատավարական տաքսացիայի պարագայում կարող են մրցակցել ապացույցն անթույլատրելի ճանաչելու երկու տարբեր օրենսդրական հիմքեր՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը և 4-րդ մասը:

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝ (...) սույն օրենսգրքով նախատեսված ընթացակարգի խախտմամբ, եթե հնարավոր չէ դրա հետևանքը վերացնել այլ ապացուցողական գործողության պատշաճ կատարմամբ:

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «ապացույցներ ձեռք բերելիս էական են նաև այն խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ»:

Վարչական իրավունքի վարութային նորմերի խախտումները չեն կարող գնահատվել ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի տեսանկյունից, քանի որ դատավարական այս նորմը փաստական տվյալը՝ որպես ապացույցի անթույլատրելիություն, կապում է բացառապես քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգի խախտման հետ: Ինչից հետևում է, որ քրեական դատավարությունից դուրս՝ այլ իրավունքի ճյուղի նորմերի խախտումները հիմք չեն այս կանոնով ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար: Հետևաբար՝ ստուգման հարցերը կարգավորող վարչական իրավունքի ընթացակարգային նորմերի խախտման հետևանքով ստուգման ակտի անվավերությունը քրեական վարույթի շրջանակներում մեխանիկորեն չի կարող հանգեցնել այդ ստուգման ակտի, ինչպես նաև դրա հիման վրա ձեռքբերված այլ տվյալների անթույլատրելիության: Օրինակ՝ հարկային ստուգման ընթացքում վարչաիրավական նորմերով սահմանված ժամկետների խախտման հետևանքով ստուգման ակտի անվավերությունը չի բացառում քրեական վարույթի շրջանակներում այդ ակտի, ինչպես նաև դրա հիման վրա իրականացված փորձաքննության եզրակացության՝ որպես ապացույցի օգտագործումը:

Վարչական իրավունքի վարութային նորմերի խախտումները կարող են գնահատվել ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 4-րդ մասի տեսանկյունից: ՀՀ քր. դատ. օր.-ում, բացի դատավարական օրենքի էական խախտումների ցանկից, սահմանվում է նաև օրենքի էական խախտման ընդհանուր ձևակերպում՝ որպես այդպիսին համարելով այն խախտումները, որոնք դրսևորվում են ապացույց ձեռք բերելիս մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 4-րդ մաս): Այս նորմն ունի նաև սահմանադրական հիմքեր:

Օրենսդրի կողմից ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 4-րդ մասում օգտա-

գործված՝ «ապացույցներ ձեռք բերելիս» եզրույթը չպետք է մեկնաբանել բացառապես քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից այդ գործողությունն իրականացնելու իմաստով, այլ պետք է վերաբերի այդ փաստական տվյալի ստացման ամբողջ գործընթացին, այդ թվում՝ քրեական վարույթից դուրս ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի կողմից ստուգման ակտի կազմման ընթացքին:

Եթե ստուգման ակտը (որպես վարչական ակտ) անվավեր է ճանաչվել վարչական իրավունքի այնպիսի վարույթային նորմերի խախտումների հիմքով, որոնք առնչվում են մարդու և քաղաքացու սահմանադրական (հիմնական) իրավունքներին, ապա դրանք հիմք են ինչպես ստուգման ակտը (որպես արտավարույթային փաստաթուղթ), այնպես էլ դրանից բխող և դրա հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվող այլ տվյալներն անթույլատրելի ապացույց ճանաչելու համար: Օրինակ՝ եթե ստուգման ընթացքում խախտվել է անձի լավամ լինելու հիմնական իրավունքը, ապա այդ խախտումը հիմք է նաև քրեական վարույթում ստուգման ակտը՝ որպես արտավարույթային փաստաթուղթ, ինչպես նաև դրա հիման վրա իրականացված փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու համար:

Ընդ որում, եթե վարչական ստուգման դեպքում կարող է կիրառելի լինել ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքը, ապա կիսադատավարական ստուգման դեպքում ստուգման ակտի՝ որպես արտավարույթային փաստաթղթի անթույլատրելիության համար, բացի նշվածից, կիրառելի նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը՝ տվյալը ձեռք է բերվել՝ տվյալ քրեական վարույթն իրականացնելու, համապատասխան ապացուցողական կամ վարույթային այլ գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից: Այս կանոնը կարող է կիրառվել այն դեպքում, երբ ստուգումը նշանակել է տվյալ քրեական վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող քննիչը: Նման դեպքում ստուգման ակտը կարող է անթույլատրելի ապացույց ճանաչվել ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիմքով:

(բ) Վարչական իրավունքի նյութական նորմերի խախտման քրեադատավարական տարասցիան: Ինչ վերաբերում է վարչական իրավունքի նյութական նորմի խախտման հիմքով վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքերին, ապա նման իրավիճակները ևս ստուգման ակտի՝ որպես արտավարույթային փաստաթուղթն անթույլատրելի ճանաչելու մեխանիզմական հիմք չեն: Այն կարող է ազդել ապացույցի հավաստիության գնահատման վրա: Օրինակ՝ դատարանն անվավեր է ճանաչում ստուգման ակտն այն պատճառաբանությամբ, որ ստուգման ընթացքում չի հիմնավորվել կազմակերպության կողմից որոշակի խմբաքանակի ապրանքներ իրացնելու փաստը, ինչի հիման վրա հաշվարկված հարկային պարտավորությունները շահութահարկի և ավելացված արժեքի հարկի մասով գնահատվում են ոչ իրավաչափ: Եթե քրեական վարույթի ընթացքում իրացման

փաստի վերաբերյալ ձեռք են բերվել քրեադատավարական ապացույցներ, ապա դրանք պետք է գնահատվել են ստուգման ակտի հետ համատեղ:

Բացի այդ, եթե հարցին մոտենանք խիստ ձևական-իրավաբանական տեսանկյունից, ապա կարելի է նշել, որ արտավարության փաստաթուղթ ճանաչված ստուգման ակտն ինքնավար է վարչական իրավունքից, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ի արտավարության փաստաթղթերը վերտառությամբ 96-րդ հոդվածի 1-ին մասում ստուգման ակտի անբողոքարկելի դարձած լինելու կամ անվավեր չճանաչելու հանգամանքը՝ որպես արտավարության փաստաթուղթ ճանաչելու համար, պարտադիր (obligatus) հատկանիշ չէ: Ստուգման ակտը՝ որպես արտավարության փաստաթուղթ, իր ապացուցողական նշանակությունը ձեռք է բերում ոչ թե իբրև վարչական ակտ անբողոքարկելի դառնալու կամ անվավեր չճանաչվելու հանգամանքով պայմանավորված, այլև դրանում բովանդակվող փաստական տվյալների ուժով, որոնք նշանակություն ունեն քրեական կոնկրետ վարույթի համար և ձեռք են բերվել տվյալ քրեական վարույթի շրջանակներից դուրս:

4.4.4. Ստուգման ակտի և փորձաքննության եզրակացության կապը: Ինչ վերաբերում է այն իրավիճակներին, երբ քրեական վարույթում առկա է փորձագետի եզրակացություն, որը հիմնված է անվավեր ճանաչված ստուգման ակտի վրա, հարկ է նկատել, որ քննարկվող դեպքերում գործ ենք ունենում տեսությանը հայտնի և պրակտիկայում կիրառություն ստացած՝ ապացույցների թույլատրելիությանը վերաբերող «թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» կանոնի հետ: Հետևաբար՝ այս կանոնը կիրառելիս ուղենիշային պետք է լինեն Վճռաբեկ դատարանի սահմանած՝ «բխելու» և «պատճառական կապի» չափանիշները: «Բխելու» չափանիշն առկա է այն դեպքում, երբ ապացույցն անմիջականորեն բխել է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցից: «Պատճառական կապի» չափանիշը նշանակում է, որ անգամ անօրինական ճանապարհով ստացված տվյալի վրա ամբողջությամբ հիմնված (դրանից բխած) ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար անհրաժեշտ է, որ բացակայի ողջամիտ ջանքերով այդ ապացույցը ստանալու հնարավորությունը⁷:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԿԴ2/0024/01/17 գործով, անդրադառնալով անվավեր ճանաչված ստուգման ակտի առնչությամբ փորձագետի եզրակացությանը՝ որպես ապացույց անթույլատրելի ճանաչելու հարցին, արձանագրել է, որ գործի փաստական տվյալներից հետևում է, որ ընկերության հարկային պարտավորությունների չափը հաշվարկելիս ստուգման ակտը որևէ ազդեցություն չի ունեցել փորձաքննության արդյունքների վրա. նախ՝ փորձաքննությունը կատարելիս ուսումնասիրվել և հետազոտվել են ոչ միայն ստուգման ակտը, այլ ընկերության հարկային գործը, քրեական գործի նյութերը, ընկերության հաշվապահական

⁷ Տե՛ս ՎԲ-07/13 քրեական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 31.05.2014թ. որոշման 35-րդ կետը:

փաստաթղթերը, անձնական հաշվի քարտերը, բացի այդ՝ ստուգման ակտով և փորձագետի եզրակացությամբ հաշվարկված հարկային պարտավորությունների չափերը տարբեր են:

Վերոնշյալից ակնհայտ է, որ փորձագիտական եզրակացությունը կազմելիս փորձագետներն իրենց տրամադրության տակ ունեցել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ընկերության հարկային պարտավորությունների չափը որոշելու և հիմնավորված եզրակացություն կազմելու համար, հետևապես խնդրո առարկա ստուգման ակտը որևէ ազդեցություն չի ունեցել փորձագիտական եզրակացության արդյունքների վրա, մասնավորապես՝ ընկերության հարկային պարտավորությունների չափը որոշելիս:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարել Վերաքննիչ դատարանի կողմից դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ապացույց դիտարկելը միայն այն պատճառաբանությամբ, որ փորձաքննության եզրակացությունն ըստ էության առնչվում է ստուգման ակտին և, ի թիվս այլնի, հիմնվում է նաև անվավեր ճանաչված ստուգման ակտի տվյալների վրա:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր. 205-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ խոշոր չափերով հարկեր չվճարելու համար, իսկ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող խոշոր չափը որոշվել է հենց դատահաշվապահական փորձաքննության եզրակացությամբ պարզված և արձանագրված հարկային պարտավորության չափով՝ 9.675.183 ՀՀ դրամ, ինչն էլ ընկած է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի հիմքում: Այսինքն՝ տվյալ դեպքում ապացուցման առարկան ոչ թե հարկային մարմինների գործողությունների իրավաչափության ստուգումն է եղել, այլ ընկերության հարկային պարտավորությունների չափի պարզումը, որն էլ կատարվել է դատահաշվապահական փորձաքննության արդյունքներով:

Վճռաբեկ դատարանի նշված որոշումից կարելի է ենթադրել, որ դատարանը փորձագետի եզրակացության անթույլատրելիությունը բացառող հանգամանք է դիտարկել ստուգման ակտի և դրա հիման վրա իրականացված փորձաքննության եզրակացության միջև ուղղակի և անմիջական պատճառահետևանքային կապի բացակայությունը: Հետևաբար՝ նկարագրված իրավիճակներում քրեական վարույթում ստուգման խնդիրները ներառող փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի հատկանիշները պետք է գնահատվեն՝ անկախ ստուգման ակտի անվավեր լինելու հանգամանքից:

Միևնույն ժամանակ, եթե քրեական վարույթի շրջանակներում նշանակված փորձաքննությունն անմիջականորեն բխում է և պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում ստուգման ակտի հետ (պայմանականորեն անվանենք՝ ստուգման ակտի ստուգում), ապա արդյո՞ք ստուգման ակտի անվավեր ճանաչումը բոլոր դեպքերում պետք է հանգեցնի փորձագետի եզրակացության՝ որպես ապա-

ցույցի ինքնուրույն տեսակի անթույլատրելիության: Առաջ անցնելով՝ ցանկանում ենք նշել, որ նման դեպքերում փորձագետի եզրակացության գնահատումը պետք է իրականացվի նաև դրա հիմքում ընկած ստուգման ակտը գնահատելով:

Անվավեր ճանաչված ստուգման ակտի հիման վրա իրականացված փորձաքննության եզրակացությունը գնահատելիս պետք է ուղենիշային լինի այն, թե արդյո՞ք առկա է ստուգման ակտը՝ որպես անթույլատրելի տվյալ գնահատելու ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք: Այն դեպքում, երբ ստուգման ակտն անվավեր է ճանաչվել այնպիսի խախտումների հիմքով, որոնք առնչվում են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին կամ ազատություններին, ապա այդ հանգամանքը հիմք է ստուգման ակտից բխող և դրա հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվող փորձագետի եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու համար: Նույն է իրավիճակը, օրինակ, կիսադատավարական ստուգման դեպքում, երբ ստուգում նշանակել է տվյալ վարույթով իրավասություն չունեցող քննիչը: Մինչդեռ, եթե ստուգման ակտն անվավեր է ճանաչվել այլ վարչաիրավական նորմերի խախտումների հիմքով, որոնք չեն առնչվում քրեադատավարական նորմերի խախտումներին կամ անձի սահմանադրական իրավունքներին կամ ազատություններին, և բացակայում է ստուգման ակտը՝ որպես անթույլատրելի տվյալ գնահատելու ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածով նախատեսված որևէ այլ հիմք, ապա ասվածը չի բացառում անվավեր ճանաչված ստուգման ակտի հիման վրա իրականացված փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի թույլատրելի ճանաչումն ու օգտագործումը քրեական վարույթի ընթացքում:

Եզրակացություն

Օրենսդիրը մի կողմից՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ իրականացված ստուգման արդյունքները համարել է ապացույց, մյուս կողմից՝ չի նախատեսել այդ ապացույցի հավաքման եղանակը:

Մինչդատական վարույթում ստուգում նշանակելու մասին քննիչի որոշումը՝ որպես վարույթային ակտ, ենթակա է բողոքարկման դատախազական հսկողության կարգով:

Դատաքննության ընթացքում քննիչի՝ ստուգում նշանակելու մասին որոշումը կարող է վիճարկվել հետաձգված ռեժիմով՝ որպես արտավարության փաստաթղթի, ինչպես նաև դրա հիման վրա ստացված այլ տվյալների թույլատրելիության վիճարկման համատեքստում:

Հսկող դատախազի կողմից ստուգում նշանակելու մասին քննիչի որոշման վերացումը մի դեպքում պետք է հանգեցնի դեռևս չավարտված ստուգումը դադարեցնելուն, իսկ մյուս դեպքում, երբ առկա է ստուգման ակտ, ապա այդ ակտի՝ որպես արտավարության ապացույցի անթույլատրելիության:

Քրեական վարույթում ստուգման ակտը գնահատվում է ոչ թե իբրև վարչա-

կան ակտ՝ ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքով նախատեսված վարչական ակտին ներկայացվող պահանջներին համապատասխանելու տեսանկյունից, այլ այնպես, ինչպես քրեական վարույթում առկա մյուս բոլոր ապացույցները, մասնավորապես, ՀՀ քր. դատ. օրով սահմանված չափանիշներին՝ վերաբերելիությանը, թույլատրելիությանը, հավաստիությանը համապատասխան:

Ընթացակարգային նորմի խախտման հետևանքով ստուգման ակտն անվավեր ճանաչելը հիմք չէ այդ փաստական տվյալը կամ դրա հիման վրա ստացված այլ տվյալը ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հիմքով անթույլատրելի գնահատելու համար:

Ստուգման ակտի անվավեր ճանաչելը, որը չի առնչվում մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտումներին, քրեական վարույթում հիմք չէ այդ ակտը և դրա հիման վրա ստացված այլ տվյալը ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հիմքով անթույլատրելի ապացույց ճանաչելու համար: Մակայն ստուգման ակտը՝ որպես արտավարությանին փաստաթուղթ կամ դրա հիման վրա ստացված այլ տվյալը կարող է անթույլատրելի ապացույց ճանաչվել ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի այլ հիմքով:

Փրականության ցանկ (reference list, список литературы)

1. Ղամբարյան Ա., Հանրային իրավունքի զարգացումն օրենքին հակառակ (contra legem) «օրենքը չի պահանջում անհնարինը» իրավական մաքսիմի հիման վրա // Բանբեր արդարադատության ակադեմիայի, № 1 (9), 2023, էջեր 47-67.
Ghambaryan A., The Development of Public Law Against the Law (contra legem) Based on the Legal Maxim “The Law Does Not Require the Impossibility”. Bulletin of Academy of Justice, № 1 (9), 2023, p 47-46.
2. Гамбарян А. С., Даллакян Л. Г., Трансгрессия законодательных терминов и дефиниций в контексте отраслевой автономии // Государство и право. 2018. № 12. С. 93-103.
Ghambaryan A., Dallakyan L., Transgression of legislative terms and definitions in the context of autonomy of the branch of law, State and Law, 2018. № 12. p. 93-103.
3. Ղամբարյան Ա., Խանդանյան Ռ., Վարչական և քրեական դատարանների իրավասությունների (վարույթների ենթակայության) սահմանազատման հիմնահարցերը // Գատական իշխանություն: 2022, № 4-6 (274-276), էջեր 15-29.
Ghambaryan A., Khandanyan R., Issues of Delimitation of the Jurisdiction of Administrative and Criminal Courts (Subordination to Proceedings), Judicial Power, 2022, № 4-6 (274-276), p. 15-29.
4. ՎԲ-07/13 քրեական գործով ՀՀ Վճարելի դատարանի՝ 31.05.2014թ. որոշում.
Decision of Court of Cassation of the RA from 31.05.2014, Criminal Case VB-07/13
5. <https://www.gov.am/files/meetings/2009/2861.pdf> (access 25.08.2023)
6. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11281&Reading=0> (access 25.08.2023)

Artur Ghambaryan

*Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law
at the Russian-Armenian University,
Doctor of Juridical Sciences, Professor,
Honored Lawyer of the Republic of Armenia,
Member of the Editorial Board of the Scientific-Practical Journal
“Legality” of the RA Prosecutor’s Office*

Petik Mkrtchyan

*Deputy Head of the Legal Department of the State Revenue Committee
of the Republic of Armenia,
Lecturer at the Yerevan State University, Faculty of Law and the
Academy of Justice*

**THE PURPOSE OF AUDIT AND EVIDENTIARY
SIGNIFICANCE OF THE RESULTS OF AUDIT IN CRIMINAL
PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA¹**

Abstract

The article deals with the essence of the institute of appointment of inspection in the criminal proceedings of the Republic of Armenia, the history of its development, as well as the evidentiary value of the act of inspection.

The article analyzes the provision enshrined in the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, according to which the results of the audit can be recognized as evidence “only if it is objectively impossible to establish any circumstance relevant to the proceedings”.

The authors disclose situations that imply impossibility and, accordingly, present when, in criminal proceedings, the results of verification may be recognized as an extra-procedural document.

The article touches upon the criminal procedural mechanism for appealing the investigator’s decision, the procedural consequences of cancelling the investigator’s decision to order an inspection by the supervising prosecutor, as well as the inter-sectoral issues of appealing the inspection act in the administrative court of the RA.

The question is also considered as to what criminal procedural consequences may result from the invalidation of an inspection act in administrative or judicial proceedings.

¹ The article was presented on 28.08.2023 and reviewed on 13.11.2023.

As a result of the analysis, the authors came to the conclusion that recognition of the inspection act as invalid, which is not related to violations of constitutional rights and freedoms of man and citizen, in criminal proceedings is not a basis for recognising this act and other data obtained on its basis as inadmissible evidence on the basis of point 3, part 3, Article 97 of the RA Criminal Procedure Code.

However, the inspection act as a non-production document or other data obtained on its basis may be recognized as inadmissible evidence on the other basis of Article 97 of the RA Criminal Procedure Code.

Keywords: inspection act; extra-procedural document; criminal procedural taxonomy; administrative act; autonomy of branches of law.

Артур Гамбарян

*Заведующий кафедрой теории права и конституционного права
Российско-Армянского (Славянского) университета,
доктор юридических наук, профессор,
заслуженный юрист Республики Армения,
член редакционной коллегии научно-практического журнала
«Законность» Прокуратуры РА*

Петик Мкртчян

*Заместитель начальника юридического управления
Комитета государственных доходов Республики Армения,
преподаватель Академии юстиции и юридического факультета
Ереванского государственного университета*

**НАЗНАЧЕНИЕ ПРОВЕРКИ (РЕВИЗИИ) И ДОКАЗАТЕЛЬНАЯ
ЗНАЧИМОСТЬ РЕЗУЛЬТАТОВ ПРОВЕРКИ В УГОЛОВНОМ
СУДОПРОИЗВОДСТВЕ РА¹**

Абстракт

В статье рассматривается сущность института назначения проверки в уголовном судопроизводстве Республики Армения, история его развития, а также доказательное значение акта проверки.

Анализируется закрепленное в новом уголовно-процессуальном кодексе РА положение, согласно которому результаты проверки могут быть признаны в качестве доказательства «только в том случае, если установление какого-либо обстоятельства, имеющего значение для производства, объективно невозможно».

Авторами раскрываются ситуации, предполагающие невозможность, и, в соответствии с этим, представляется, когда в уголовном производстве результаты проверки могут быть признаны внепроизводственным документом.

В статье затрагивается уголовно-процессуальный механизм обжалования решения следователя, процессуальные последствия отмены решения следователя о назначении проверки контролирующим прокурором, а также межотраслевые вопросы обжалования акта проверки в административном суде РА.

Обсуждается также вопрос о том, к каким уголовно-процессуальным последствиям может привести признание акта проверки недействительным в порядке административного производства или судопроизводства.

¹ Статья была представлена 28.08.2023 и прошла рецензирование 13.11.2023.